

«մէհանանթութիւն»ը, ինչ որ եղած է գերազանց կերպով Յոյներէ մասնագիտութիւնը :

Այս միշտ Հայերի զերբ հարելիստանում գտնուեմ եմ այն համեստ արհեստաւորներէ մէջ որոնք իրանց ցեղի յատկանիշը ցոյց են տալիս նաեւ օտարութեան մէջ եւ որոնք բարեբախտաբար քաջալերութիւն էլ են գտնում Մենելիք թագաւորի կողմից եւ վարձատրուած, որը բաւական է առաւելութիւն տալու Հայերին՝ Յոյների հետ համեմատելիս : Այս բոլորի մասին թող մոռնայ պ. «Հեթումը», բայց թող գտնէ տասնեակ տարիներով ասղն-գործուած թեամբ պարագայող եւ այդ արհեստը հարեչուհիներին սորվեցնող Հային սոսկ «կար կարող»ի անունը չտայ :

Գ. ԱՐԱՅԻԱՆԸ



Ք Ր Ո Ն Ի Կ

—

Տիրան Ալեքսանեան. — Գրեթէ տարիէ մը ի վեր Փարիզի մէջ կը գտնուի Պոլսեցի հայ առաջնադաս դասման դասարանը : Տիրան Ալեքսանեան, որ արդէն Պերլինում նուազահանդէսներ առած է՝ Փարիզ զալէն առաջ՝ եւ մեծ յաջողութիւն կտած : Փարիզում, իր յաջողութիւնը ալ աւելի մեծ եղաւ : Բարձր ընկերութեան սալօններուն մէջ յաճախ հրաւիրած են զինքը եւ իր նուազատիւրիւնը միշտ խանգալաւ ծափերով ողջունուած է : Գոնակրկաթուարի նուագահանդէսն՝ ինչ մէկուէն մէջ, որոնց միծանուին արուեստագէտներ միայն կը մասնակցին, հրաւիրուեցաւ անգամ մը նուագելու իսկ «Վիկտորին, իր յունիս 8ի «Ճալլ օբլօք»ի երաժշտական ցե կեդրիին հըրաւիրած ըլլալով Պ. Ալեքսանեանը, օտալէս կը դրէ անոր մասին : «Հանդէսը բացաւ երթն տասարդ հայ բամբջութեակահար մը (Violoncelle)» : Տիրան Ալեքսանեան : Այս ձմեռ Փարիզի մէկ քանի սալօններում արդէն ծափահարուեցաւ Պ. Ալեքսանեան : Բայց արուեստագէտը սիրողներու այդ նեղ յորջանից գուրքի ծանօթ էր, մինչ իր արժանիքը աւելի մեծ հաշակի ալ ծանի է : Անսահման հրապոյ-

րով անհեղ Պոքքերինի sonate en laին «առաւելօն» եւ «այլկիւրսն», ու խորապէս արաւայայտեց այն միպտուն միամաղձութիւնը եւ եւ քնքով բուն «իտալական» յուզումը, զոր կը բովանդակէ այդ երաժշտական կտորը : Հասարակութիւնը քերթօրէն ծափահարեց Պ. Ալեքսանեանը : »

Զեյթունի Ն. Բարամանեան. 100 ֆ., Տիկին Թագուր փայա Թակոբեան, 100 ֆ., Պ. Լեւոն Պէյ Թակոբեան, 100 ֆ., Պ., Ե. Իսմիրլեան, 3 ֆ., Տր. ... 10 ֆ., Ուն, 10 ֆ. :

Վոսմապուհ քահանային մօտ կայ ուրեմն այս վարկեանիս, 1367,95 ֆրանք :

Լ'Արմենիէն կ'իմանանք թէ Պ. Զեյթունի հանգանակութիւնը հասած է 1561,05 ֆրանքի : Պուլկարիյ. Ամերիկայի մէջ հանգանակութիւններ կը շարունակուին նոյն նպատակով : Զենք կրնար դիտել չտալ որ, Նախտակ ցոյց տրուած ընդհանուր խանդավառութեան, հասարակած գոեմարները չափազանց չնչին են դեռ՝ բաղդատամբ նպատակին վերութեանը եւ անհրաժեշտութեանը, ճաշարի է մանաւանդ որ քաղաքական ու եւ հանդամանք յունեցող գուտ բարեգործական աշակերտ հանգանակութեան մը հանդէպ մեր շարուստ դասակարգը միծ մասամբ անտարբեր մնացած ու մասնակցող քանի մը անհատներն ալ այնքան անշնչալ գոմարներ նուիրելով իրենց պարտքը կատարածի պէս նկատած ըլլան :

Նոր Դարը իր վերջին թիւերէն մէկուն մէջ խմբագրական մը նուիրած է Զէյթունի առողջական կայաններ : Մեր կողմանեան պաշտօնակցին համեմատ, Զէյթունի բնակչութիւնը, որ այնքան առողջ է եղած ատենով եւ դեռ է մեծ մասամբ, սկսած է ակարանալ սրիֆիլիսի տարածումը, որ կը սպառնայ ինքի առաջը շարունակ՝ բոլորովին ալլասերել այդ հուժկու ցեղը : Նոր Դար կը հրաւիրէ հայ հասարակութիւնը դարձան տանիլ իրերու այդ վիճակին :

Թէ՛ ծաղկախոտի պարբերաբար դործած չարիքն, եւ թէ՛ «Սիֆիլիս»ի պատճառած քայքայումն հիմնապէս փրկելու համար մեր Զէյթունի եղբայրները, անհրաժեշտ է որ հիւանդանոց մը հոստատուի Զէյթունի մէջ : այդ

առաջարկութիւնը մենք առաջինը եղանք ազգին ներկայացնող, «Աէյթուցի»ի կողմէն արձագանք հանդիսանալով, Գոհ պիտի ըլլայինք եթէ Նոր Դար ինչպէս եւ կողակտան բուր հայ թերթերը աջակցէին մեր բացած հանգանակութեան. իրենք ալ բանալով նոյն նպատակով հանգանակութիւններ, որպէս զի հաւաքուած գումարներուն ամբողջութիւնը բաւէ հաստատելու հիւանդանոց մը եւ որբանոց-դպրոց մը: Բիշ մը բարի կամեցողութիւն բաւակն է՝ այդ երկու պէտքերուն ալ զոհացում տալու համար:

Վաճառականական վարժարան մը Մանկեսթրի մէջ. — Մանչեսթրէն մեզի կը հաղորդեն թէ այդ քաղաքին համալսարանը որոշած ըլլալով վաճառականական ֆաբրիկէ մը հաստատել. դիմում մը երած է քաղաքին քնակիչներուն որ առաջ տարուան համար տարեկան 1500 ոսկիինը շինարարութեամբ մ'աջակցին այդ հիմնարկութեան՝ տեղւոյն ծանօթ վաճառականներէն Պ. Գ. Օնտզիւան, որ Մանչեսթրէի Համալսարանին մօտ Գոլդսթրի անկիւն չլմանաւարտնորէն մին է, գեղեցիկ եւ ուշիմ դաղափարն ունեցած է հրաւիրելու Մանչեսթրի հայ գաղութը՝ մասնակցել այդ հանգանակութեան, իր կողմ անշուշի չէ մնացած. տեղւոյն հայ վաճառականներն արդէն որոշած են տարեկան 100 ոսկի հայ գաղութին կողմէ իբր նուէր յատկացնել այդ վաճառականական վարժարանին հիմնարկութեան նպատակով, Հաճոյքով կ'արձանագրենք այս որոշումը, որով Մանչեսթրի հայ գաղութը կ'ապացուցանէ թէ գիտէ իր երախտագիտութիւնը յայտնել այն մեծ օգուտներուն համար զոր քաղած է այդ քաղաքին ազատ հիւրընկալութիւնէն: Այդ վաճառականական ֆաբրիկէն արդէն կարելի է ուղղակի օգտակար ըլլալ հայ երիտասարդութեան. անկից չըջանաւարտ ելլող հայ երիտասարդները ապահովապէս գործ պիտի գտնեն անդրկական կամ հայ վաճառականական մեծ տուններու մէջ, եւ կամ՝ եթէ անձնական հարստութիւն ունին՝ աւելի լայն ու գիտակից ստեւարական գործունէութիւն մը պիտի կարենան ձեռնարկել, վաճառականական գիտութեան ոլորտ ծանօթութիւնները իւրացնողք ըլլալով. — Երբ ալ վարժարանն իր յայտագրին հրատարակէ, անոր թարգմանութիւնը պիտի սպենք «Անահիտ»ի մէջ:

Ա. Մատուռեան. — Խորին ցառով իմացանք կողկասի թերթերէն թէ Առաքել Մատուռեան, իր գործերուն վերջերս ստացած ձախող վիճակէն վնասած, անձնապէս եղած է: Մատուռեան ազգային, գրական, գեղարուեստական ձեռնարկներու օգնող, ուսանողներու աջակցող աշխիւ Հայ մը եղած է. իր այս զառն վախճանը տխրութիւն պիտի պատճառէ բոլոր անոնց որ զինքը կը յարգէին:

Տիգրան Երկաթի մէկ անճիպ աշխատութիւն. — Ժան Յինոյի հրատարակած Լա Ռելիւ հանդէսին մէջ երեւցաւ վերջերս «Տիգրան Երկաթ»ի մէջ Հատ գեղեցիկ անտիպ աշխատութիւնը յունական արդի գրականութեան վրայ. այդ աշխատութեան կ'ընկերանայ Ժան Մէնտրի մէկ յօդուածը ուր այդ յոյն գրողը հիացմամբ գրուածաբանը «Երկաթ»ի սաղանդը, կը յայտնէ թէ նոյն իսկ Յունաց մէջ ոչ ոք այդքան խորապէս վերլուծած է յունական արդի կեանքն ու բանաստեղծութիւնը:

Լուսին եւ հիպոքոսի Ողորդանգը. — Լուսմայի վերջին թիւին մէջ, պ Մ. Բերբերեան, գրելով Թումանյանի խոշորոյն վրայ, կ'ըսէ թէ այդ հարցին առթիւ արտասահմանի լրագիրներու մէջ գրուածները Հատ վնասած են այն հանգանակութեան որ Բոսթովի եւ Նոր Կաթիլի մէջ զրուածները Հատ վնասած են նոր Կաթիլի մէջ բացուած է ի նպատակ հիպոքոսի որբանոցին Պարտք կը համարինք յայտարարելու թէ հիպոքոսի որբանոցը, որ կը գտնուի Մանչեսթրի եւ Փարիզի խումբ մը վաճառականներու հսկողութեան տակ, եւ իր գլուխն ունի ուշիմ, լուրջ եւ ազնիւ տնօրէն մը՝ պ. Բիրքեճեան. ոչ մէկ կերպով չի նմանի Թումանյանի շարլաթանական հաստատութեան, հիպոքոսի որբանոցը արժանի է ամբողջ ազգին համակրութեան եւ աջակցութեան. այնպէս որ Բոսթովի եւ Նոր Կաթիլի մասին Հայերը պէտք է որ իրենց հանգանակութիւնը շարունակեն՝ ազգօգուտ հաստատութեան մը աջակցելու բացարձակ ապահովութեամբ:

Փրոֆ. Մար եւ Կովկասի արձանագրութիւնները. — Թիֆլիսի թերթերէն կ'իմանանք թէ Ժան Թէ հայագէտ փրոֆ. Մար Փեթրեսպուրիի Ակադեմիային ներկայացուցեր է առաջարկութիւն մը Կովկասի հայկական եւ վրացական ար-

ձանագրութեանց ամբողջական հաստատումը մը (corpus) պատրաստելու հաշի առաջարկին ընդունումը եւ պ. Մարի յանձնուած է ծըրազրին իրագործումը Գ. Մար եկած է արդէն Թիֆլիզ եւ կազմած է մասնախումբ մը հայ եւ վրացի անձնաւորութիւններէ բաղկացած որ պիտի որոշէ այն հայ ու վրացի գիտունները որոնք պիտի աջակցին պ. Մարին՝ այս զօտւարին ու ամենակարեւոր գործին մէջ :

Գ. Լուսինեանի Բաւարանը. — Գուրտոն Լուսինեանի ֆրանսահայ մեծ բաւարանին երկրորդ հետորը լոյս տեսաւ այս օրերս. հեղինակը ուղեկով հայ ժողովուրդին բոլոր խաւերուն մատչելի դարձնելի աշգրտագիտութեան գործին վայելումը, որոշած է երկու հատորը միասին 25 ֆրանքի ծախել, Գինը ուղեկները պէտք է գրման հեղինակին

108, Avenue de Neuilly

Neuilly sur Seine

France

Լոյս. — Ե. Թովչեանի խմբագրութեամբ պատրաստուածն օպագրութեան համար՝ սեղանի (1 ր.) պատի (50 կոպ.) եւ գրպանի (20 կոպ.) պատկերազարգ օրացոյցներ 1904 թ., վիճակագրական, գրականական, գիտական եւ զեղարուեստական հարուստ յաւելումներով :

Աշխատակիցներն են՝ Անարոնեան Ա., Առաքեան Ս., բժ. Արծրունի Վ., Ա. — Գուրաշին-Վրդեան Գ., բժ. Բուդապեան Ա., Թումանեան Յով., Իսահակեան Ա., Լէօ, Մատուրեան Ա., ասամաւարոյ Վահագեան Ն., Ղազարեան Գ., Մալխասեան Ս., Մանուէլեան Լ., ասամաւարոյ Մակարեան Գ., Մեծատուրեան Գ., Յովհաննիսեան Տիգ., Նիկողոսեան Ն., Զաւ., Շիրվանզադէ, Չօպանեան Ա., Պոռնեան Գ., Զամբաղեան Զ., Սերոբեան Ա., Տէր Մինասեան Արշ. քնն., Տէր Միրաքեան Յով., բժ. Օհանեան Գ., Բապախեան Վրթ., գոկ. Փայանեան Կ., բժ. Փայանթարեան Լ., Պրանզեան Ն. եւ ուրիշներ :

«Լոյս»-ը իր չքեղ արտաքինով (բազմաթիւ պատկերներ) եւ բազմախոյզանի բովանդա-

կութեամբ լինելու է ամէն մի ընթերցողի խորհրդատու ընկերը, ամեն մի ընտանիքի սեղանի զարդը :

Այժմանցիկ գումարով գնողներին նախապէս զեջում կը լինի :

Սեղանի օրացուցում նաեւ կը օպագրութի յայտարարութիւններ բոլոր լեզուներով :

Դիմել՝ Tiflis, Troizkaia 11, E Toptshian :

Բանբեր. — Ի մօտոյ լոյս կ'ընծայուի «Բանբեր գրականութեան եւ արուեստի հանգիսի Ա. գիրք»՝ հետեւեալ բովանդակութեամբ :

***. Ն. Աղունց :

Ա. Վիպական. — Կարմիր ժամուց, վիպակ, Ա. Արիարեան, — Դատաւոր, պատմական վ. Փափագեանի, — Սեւ հաւը կանչեց, Զարգարեանի, — Նախագարուն, Ն. Ռէթգէի, — Լճակին զամբիլը, Անելի, — Անպատելի բաժակ ու Հերմապոյի պատմութիւնը, Հ. Գր Րենեէի :

Բ. Բանաստեղծական. — Հոգեվարքի ջահեր, (Աղթթ, Զարգարեանի երազ, Դիմիթիւն) Ա. Նարեանեանի, — 1. Մեր նախորդներին, 2. Պանդուխտ իմ ընդիկ, Յովհ. Թումանեանի, — Հնչեակներ (1. Հրաժեշտ, 2. Մտածում, 3. Պատրանքներ, 4. Կանգնեալ աղաւթ, 5. Այսպիսի ետքը), Վ. Թէքեանի, — Վարկեաններ եւ վանկեր (1. Դակուն, 2. Իրիկուն, 3. Հոգեի ծով, 4. Դիւեր, 5. Յուշերգ) Մ. Կուսիկեանի — Մայիսեան գիշերին. Ա. Բաբեանի, — Մայր տանջանքը, Լ. Աթաբեկեանի, — Տեսիլքներ, 2. Կլեոպատրա, 3. Երեկոյեան, Ա. Սամէն :

3. Տեսական. — Գրական նշմարներ (զեկագանս եւ սիմբոլիզմ, Ն. Աղունց, — Արեւմտեան Հայոց արդի գրականութիւնը, **), — Իրաւունք եւ բարոյականութիւնը, Ա. Կուսիկեանի, — Հայոց եկեղեցու հազարվեցհարիւրամեակի նախօրակին, — Ս. Նազարեանի նամակները, — Մ. Կ. Մուրատեանի գրութիւն Լեւոն ԺԳ պոպին :

4. Դեղարուեստական. — Նկարներ եւ քանդակներ. Ա. «Eccae ancilla domini» Գ. Գ. Րոսսետի, — 1. «Իրիկուն համբոյր», 2. «Մայրական գորով», 3. «Վերջին կենդանագիրը», Է. Կարիէրի, — «Համբոյր», 0. Ռոզենի, — «Մեռածներին», Բարթոլոմէ, — 1. «Պատերազմ», 2. «Սփինք», 3. Շոտկի, — 1. «Նկարչութիւնն

եւ քանաստեղծութիւն» 2. «Կեանքի կղզին», Բէօկլէնի, — «Կնոջ պատկերը», 3. «Լեւնախի», «Ընթերթ», Լ. Բակոսի, — 1. «Յուզայ», 2. «Լուսածագին», Վ. Կոտարբրինսկու, — Դամախազ, Ն. Բոկչանով Ռէյսկի:

Բ. Հայ արուեստագիտներ. — «Ընթերցանութիւն», Օր. Բաքանի, — «Ըմբուհի», Է. Շահինի, — «Լուսնի օրօրը ծովում», Շապանեանի, — «Վերահաս ամպեր», Բ Մադինեանի, — «Շիրտ», Թերլիմզեանի, «Սպիտակ զգեսկ» Վ. Սուրենեանի, — «Աշուն», Ալալալեանի:

Շառուակուուի Բաժնեգրութիւնը. բաժնեգիրն է (2 գրքի) մինչեւ լոյս տեսնելը Ա. գրքի, 10 ֆրանկ, Ա. գրքի գինն է 7 ֆրանկ: Խմբագիր՝ Ն. Աղոնց, Հրատ. Ս. Մելիքեանց, հասցէ՝ Aram Melikyan,

St. Petersburg, Newsky press, 55,

Լուսաբեր. — Գրական հաւաքածոյ, Հայաստանեայց ժողովրդական լուսաւորութեան եւ Ս. Էջմիածնի մայր տաճարի հիմնադրութեան հազարվեցհարիւրամակի յիշատակին՝ Կիպրոսի ազգային կրթարան-որոնոցի տպարանէն պիտի հրատարակուի «Լուսաբեր» տրողոսով մի հատոր. — հաւաքածոյ ազգային, եկեղեցական, պատմական, բարոյական եւ բանասիրական ուսումնասիրութեանց:

Մեր ձեռնաս գործները շնորհապարտ կը թողուին մեզ էթէ հաճին աշխատակցիւ այս հրատարակութեան:

Դօրքը լոյս կը տեսնէ ներկայ տարւոյս ընթացքին մէջ, Նիւթական հասոյթը կը յատկացուի հաստատութեան:

Դիմել՝ Rédaction Lonssaper, Nicosia, Chypre.

Յարգելի աշխատակիցներու ուշադրութեան կը ներկայացնեմ հետեւեալ նիւթերը, որոնք որոշ կը յայտնեն «Լուսաբեր»ի ծրագիրը: Փափաքելի էր ստունջ նման խնդիրներ նախընտրուէին: 1. Քրիստոնէութեան ազդեցութիւնը արդի քաղաքակրթութեան վրայ: 2. Ս. Գրեգոր Լուսաւորչի կեանքը եւ գործունէութիւնը: 3. Հայոց մէջ Քրիստոնէութեան ծաւալումը զիւրացնող քաղաքական, ընկերական եւ այլ պատճառները: 4. Հայ եկե-

ղեցոյ դաւանական եւ վարչական տարբերութիւնը յոյն եւ լատին եկեղեցիներէն: 5. Հայոց եկեղեցական ժողովներու ամենէն նըշանաւորները: 6. Հայոց եկեղեցոյ պատմութեան մէջ ամենէն մեծ դէպքերը եւ ամենէն կարեւոր թուականները: 7. Մեր կրօնական գրականութեան ամենէն հին աբտաղրութիւնները: 8. Եկեղեցական նուիրակատութեան բարոյական իշխանութիւնը զօրացնելու պայմանները: 9. Հայ ժողովրդի վրայ իր եկեղեցոյ հոգեկան եւ բարոյական ներգործութիւնը պէտք եղածին պէս զգալի եւ օգտակար ընել տալու միջոցները: 10. Քննութիւն մը մեր ազգային բարոյականին վրայ (մեր մէջ հաւատարմութեան, խնայողութեան եւ այլատիրութեան չափը. — Հաւաքական գործունէութեան մէջ համերաշխութիւն եւ ճեպը. — Բարեգործութեան դէմ երախտագիտութեան համեմատութիւնը. — Ազգային վարչական շրջանակաց մէջ կարգապահութեան ուժը եւ պետերու եւ ստորակարգեալներու յարաբերութիւնը. — Մեր հանրային գործերու մէջ արժանիքի վարձատրութիւնը եւ յանցանքի պատիժը. — Լիտանեկան կեանքի մաքրութեան աստիճանը. — Ումիշի, Թղթախաղի եւ ընդհանրապէս զուարճասիրութեանց ստացած ծաւալը եւնէն: 11. Մեր նոր սերունդին ստացած Դատախարակութեան տեսակը: Նկարագրի կազմութեան մասին ուսուցիչներու կատարած դերին բնութիւնը: 12. Արդի հայ մամուլին ազդեցութիւնը մտաւորական եւ բարոյական մշակութեան տեսակէտով: 13. Ներկայ հազարվեցհարիւրամակի յիշատակին Գրեգոր Լուսաւորչի անունով մի ազգային բարեգործական ընկերութիւն եւ մի «Դանձնակ» հիմնելու հնարաւորութիւնը:

